

## 2.6. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են արտաքին առևտրի, վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի, համախառն արտաքին պարտքի գծով ցուցանիշների հաշվարկման աշխատանքները, ի թիվս պետական վիճակագրական հաշվետվությունների միջոցով հավաքագրվող տեղեկությունների, օգտագործելով նաև համապատասխան ոլորտի վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից (մաքսային վիճակագրության մասով), Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ու Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից ներկայացվող համապատասխան տեղեկանքներում ներառված տվյալները:

Վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համախառն արտաքին պարտքի վերաբերյալ ցուցանիշների հաշվարկներն իրականացվել են հիմք ընդունելով Արժույթի միջազգային հիմնադրամի «Վճարային հաշվեկշռի» 5-րդ հրատարակության ձեռնարկով սահմանված, իսկ արտաքին առևտրի վիճակագրության վարման համար՝ Միավորված ազգերի կազմակերպության վիճակագրական հանձնաժողովի մեթոդաբանության սկզբունքներն ու հասկացությունները: Հաշվի առնելով միջազգային մեթոդաբանությամբ երաշխավորվող և վճարային հաշվեկշռում ներառման ենթակա՝ դեսպանատներում տեղացի աշխատողների աշխատավարձի, այլ ծախսերի, հատուկ ֆինանսավորման և տեխնիկական օգնության մասին տվյալների հավաքագրման համար ուղղակի վիճակագրական գործիքների կիրառման խնդիրները, նշված հաշվարկների իրականացման համար մշակվել, ներդրվել ու կիրառվում են փորձագիտական գնահատականների մեթոդները, վերջիններս համալրելով Ծառայության, ինչպես նաև այլ կազմակերպությունների կողմից իրականացվող ընտրանքային հետազոտությունների արդյունքներով:

Յուրաքանչյուր եռամսյակի վերջի դրությամբ հաշվարկվել են Հայաստանի Հանրապետության համախառն արտաքին պարտքի և արտաքին ակտիվների վերաբերյալ ցուցանիշներն՝ ըստ տնտեսության հատվածների, ֆինանսական գործիքների և ժամկետայնության:

Եռամսյակային կտրվածքով մշակվել և հրապարակվել է օտարերկրյա ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունն ըստ երկրների, գործունեության, գործունեության ոլորտ-երկիր բաշխվածության կտրվածքների:

2008թ.-ից սկսած «Հայաստանի վիճակագրական տարեգրքում» հրապարակվում է Հայաստանի Հանրապետությունում կատարված օտարերկրյա ներդրումների համախառն հոսքերի և համախառն ու մաքուր պաշարների վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ գործունեության տեսակների ու երկրների:

2009թ. մայիսից Ծառայության ինտերնետային կայքէջում տեղադրել են Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի (արտահանում և ներմուծում՝ ըստ ապրանքի ծագման երկրի և առևտուր անող երկրի հատկանիշների) տվյալների բազա ամսական

կտրվածքով, սկսած 1995 թվականից ըստ գործընկեր երկրների, որը թարմացվում է յուրաքանչյուր ամիս:

Տարեկան պարբերականությամբ հրապարակվել են՝

- «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը» վիճակագրական ժողովածուն (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 2-նիշ դասակարգման), որն արտացոլում է 2003-2008թթ. արտահանման և ներմուծման ծավալները (բնաիրային և արժեքային արտահայտությամբ) ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի բաժինների և խմբերի, ըստ առանձին երկրների, ամփոփ՝ ԱՊՀ երկրներով, արտաքին աշխարհի և Եվրոպական միության երկրներով, ըստ «Միջազգային առևտրի ստանդարտ» և «Ընդլայնված տնտեսական կատեգորիաների» դասակարգման:

- «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը» վիճակագրական ժողովածուն (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման), որն արտացոլում է արտահանման և ներմուծման ծավալները (բնաիրային և արժեքային արտահայտությամբ) ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի դիրքերի (ենթախմբերի), ինչպես նաև առանձին՝ ըստ բեռնամաքային հայտարարագրերի տվյալների (իրավաբանական անձիք), ըստ ֆիզիկական անձանց կողմից կազմակերպած առևտրի տվյալների:

- «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը» վիճակագրական ժողովածուն (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 8-նիշ դասակարգման), որն արտացոլում է արտահանման և ներմուծման ծավալները (բնաիրային և արժեքային արտահայտությամբ) ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի բաժինների և խմբերի:

- «Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է հանրապետության արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ տվյալները:

- «Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային և արտաքին պարտքի դիրքերը» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է երկրի ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարների մակարդակը ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ: